ԺԴ

ՊԱՐՈՆ-ԼՈՅՍ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿ

Քեզ երանի՛ Կաֆա քաղաք,
Զի նոր նըշան քեզ երեւի.
Քոյ քահանայքըն ժողովին՝
Տաւնեն ըզտաւն Պարոն-Լուսին։
Սուրբ Պարոն-Լոյս քեզ երանի՛,
Եւ քո զարմիցն որ ի մարմնի.
Դու Քրիստոսի վըկայ եղեր,
Պարծանք Հայոց տանս Արմենի։
Այս մըթացեալ ժամանակի
Դու լոյս եղեր մէջ աշխարհի,
Եւ սառնացեալ ձմերայնի
Վարդ և շուշան մէջ պարտիզի։

Ո՞վ էր այն երջանիկ նահատակը, որոյ տարաժամ և նախանձելի անմահութիւն մահը այս սրտաշարժ տողերով կը դրուատէր մեզմէ երեք դար և աւելի յառաջագոյն Վրթանէս անունով վարդապետն «յետինս ի Քարոզողաց [1]» ինչպէս ինքզինքը կ'անուանէ, որ տեսող և աքանչացող էր հանդիսի նահատակութեանն, զմարմինն «անմաքուր բազկաւ իմով գրկեցի և եդի ի տապանի»։

1. Անշուշտ ի կարգէ հայ Դոմինիկեան միանձանց, որ բազմաթիւ էին ի ժամանակին ի թերակղզւոջ Տաւրիոյ։